

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սարգսս զանազան էլիմաներու ասի ունե-
յած յապիտո-նիաները :

Բնական Պատմութեան մարդկային բնու-
թեան ունեցած զանազան յատկութի-
ւները գիտելով՝ աշխարհաբաղաբացի ը-
սեր են զմարդ, այսինքն ամէն կլիմայի
յարմարող և ամենուրեք մէջ առաջ եկող,
ուր ընդհակառակն ուրիշ կենդանիք ի-
րենց համար առանձին կլիմայ և առան-
ձին բարեխառնութիւն ունին . որով
տեղէ տեղ փոխուելու որ ըլլան՝ կամ
բոլորովին կը փճանան և կամ տեսակ-
նին կը փոխեն : Այս բանիս տարբե-
րութիւնը մարդուս զգայական զօրու-
թեանը սաստկութենէն առաջ կուգայ
կըսեն , որով արտաքին փոփոխութիւնք
այնչափ ազդեցութիւն չեն կրնար ու-
նենալ իր ներքին բնութեանը վրայ .
իրաւ է որ շատ անգամ կլիմայի փոփո-
խութիւնները մարդուս վրայ տեսակ
տեսակ հիւանդութիւններ բերած են ,
բայց ինքը խոհուն էակ ըլլալով՝ անոնց
պատճառները կը քննէ կ'իմանայ , ու
պէտք եղած զգուշութիւններն ընելով
առողջ ու հանգիստ կը մնայ : Սիւնայ
դիտուած է որ տաք երկրի բնակիչնե-
րը աւելի դիւրութեամբ կը յարմարին
օտար կլիմայի քան թէ ցրտային բնա-
կիւնները :

Բայց աս ալ յայտնի է , որ կլիման
մարդուս չէ թէ բնական՝ այլ նաև հո-
գեկան կարողութեանցն ու բարեմաս-
նութեանցը վրայ ալ մեծ ազդեցութիւն
ունի . անանկ որ շատ անգամ անկէ առաջ
կուգան իր բարբը , կարծիքը , մտաց նա-
խապաշարմունքը , գծագրութիւնը , ե-
րեսին գոյնը և մարմնոյն բարձրութիւնը
կամ ցածութիւնը : Սահմանակից ազ-
գաց մէջ ալ այնպիսի մեծամեծ տար-
բերութիւններ կը գտնուին որ մարդուս
հաւատարմ չգար թէ անոնց պատճառն

ըլլան՝ երկու ազգաց երկրին մէջ եղած
անտառ մը , գետ մը և կամ լեռ մը . և
սակայն անանկ է :

Այն արարած բնական օրինաց տալին
է . այսինքն՝ թէ անբան կենդանեաց և
թէ մարդուս վրայ՝ երկինքն ու երկիրս
մեծ ազդեցութիւն ունին . և ինչպէս
աղէկ կ'ըսէ Պիլֆֆոն հռչակաւոր բը-
նապատումը , օդը մարդուս վրայ ինչ
ազդեցութիւն որ ունի , նոյնն ունի ու-
րիշ կենդանեաց վրայ ալ : Վայլը՝ բա-
րեխաուն երկիրներու մէջ ամենէն կա-
տաղի գազանը սեպուած է . ջերմային
երկիր մ'որ երթանք՝ կը տեսնենք որ
գայլը հոն կարծածնիս չէ . հապա վազ-
ըր , յովազն , առիւծը և ասոնց նման
ուրիշ վայրագ կենդանիներն են հոն
ահաւոր կարծուածները . հիւսիսային
գաւառներն ալ ճերմակ արջը , ծովու
հորթը , և այլն և այլն : Վերիկէի վայ-
րագ գազանները՝ Վերիկայի մէջ նոյն
կատաղութիւնը չունին . վասն զի հոն
տեղի օդը աւելի կակուղ ըլլալով իրենց
բնութեանն անյարմար է :

Բուսական արարածներն ալ կենդա-
նեաց պէս իրենց համար զատ կլիմայ և
զատ բարեխառնութիւն կ'ուզեն : Տաք
օդերու մէջ առաջ եկած բոյսերը՝ աճե-
ցուն և արգասաբեր կ'ըլլան ընդհան-
րապէս . բարեխառն եղանակներունը՝
աւելի խոտեղէն են ու բանջարեղէն ,
պտղոց մէջ ալ առողջարարներն ու հա-
մովները : Սր երկրին կենդանիներն որ
հեզ ու ընտանի են , երկրոցի մարդիկն
ալ նոյն բնաւորութեանց տէր են :

Ինքեցողաց դիւրին եղանակով մը
զուրցածնուս ճշմարտութիւնը հասկը-
ցընելու համար , հարկ է որ երկրիս
վրայ գտնուած բնակչացը բնաւորու-
թեանցը վրայ աչք մը ձգենք , հիւսի-
սային գաւառներէն սկսելով :

Վիկտորիկ մեր ճանչցած գաւառնե-
րուն մէջ ամենէն հիւսիսային երկիրը
սեպուած է , ուր որ ցուրտը սաստիկ և
օդն ալ ամենաչոր է . բոլոր ամառուան
մէջ միայն քառասուն օր հոն տեղը արև
կը տեսնուի . բայց ճառագայթիցը տա-
քութիւնը այնչափ նուազ է որ երկրին

ցրտութեանը վրայ ամենեւին զգալի տարբերութիւն մը չընէր . անոր համար մարդաբանակ ալ չէ . իսկ կենդանիներն ալ ահագին ճերմակ արջեր են , թանձր բրդով պատած , և աղուէսներ . երկիրը ոչ ծառ և ոչ խոտ կը բերէ : — Եւրոպայի որ Եւրոպայի հիւսիսային կողմը կ'իյնայ Սառուցեալ ծովուն մէջ , աշխարհքիս վրայ ամէն երկիրներէն բարձրը սեպուած է , բոլոր լեռներով պատած՝ որոնց վրայէն ձիւնը և սառը ոչ երբէք կը պակսին : Հոս ալ տեղացի բնակիչ չկայ , միայն մայիս ամսուն մէջ Սամոյետները որսորդութեան համար իրենց երկրէն հոն կ'անցնին : Երբոր 1597ին Հոլանտացիք այս երկրին արեւելեան կողմը հանդիպեցան՝ նոյեմբերի 4էն ինչուան յունուարի 26 արեւ չտեսան : — Եւրոպայի Եւրոպայի հիւսիսային կողմը մեծ թերակղզի մըն է , և ծառեր չկրնար առաջ բերել . եղածներուն ալ պտուղները անշահ բաներ են . չորքոտանի քիչ կը գտնուի , ընդհանրապէս ձկները բազմութիւն են , մանաւանդ պալէնա և ըրնկա ըստածները . օձ և կամ ուրիշ թռչնաւոր կենդանի ամենեւին չտեսնուիր , ինչպէս նաեւ Սիւրիպէրկ և Եւրոպայի և ամէն ցրտային բնակչութեան կողմը եղած գաւառները : Եւրոպայի ցուրտը շատ սաստիկ է , ինչուան բարկ հեղուկներն ալ կը սառնին՝ թէպէտ և տաք սենեկի մէջ ալ պահած ըլլաս : Եւրոպայի անէ որ երթալով ցուրտը կամայ կամաց աւելի կը սաստկանայ այս տեղուանքը . վասն զի առաջ ինչուան ցորեն ալ կը տնկեն ու կը հնձեն եղեր , և անտառ ալ պակաս չէր կ'ըսեն : Եւրոպայի ինչուան օգոստոս արեւը կը սկսի տաքնալ . լոյսը պայծառ է ու հորիզոնէն ամենեւին վար չիջնար . ուստի Եւրոպայի տիւր ոչ երբէք գիշեր կ'ըլլայ ան ամիսներուն մէջ , իսկ հոկտեմբերէն ինչուան յունուար կամ ամենեւին արեւ չեն ունենար և կամ միայն երկու իրեք ժամ . բայց արեւուն տեղ պայծառ արշալոյս , արշալուսէն ետքն ալ լուսաւոր հիւսիսայց կ'ունենան : Եւրոպայի և

Եւրոպայի մի և նոյն ցեղէ կը սեպուին իրենց լեզուին , բնակչութեանը , գծագրութեանը և սովորութեանց նմանութեանը համար . փոքրահասակ են , գրեթէ 4 ոտք բարձրութիւն ունենալով . գլուխնին մեծ է , երեսնին լայն ու տափակ , յօնքերնին բարձր , քթերնին տափակ ու պզտիկ , շրթունքնին թանձր ու դուրս ընկած , մորթերնին ալ սևսրւուկ : Իսկ կանայք աւելի պզտիկ են , ձեռքերնին և ոտքերնին ամենակարճ , և դէմքերնին արանց շատ նմանութիւն ունի , սովորաբար անոնցմէ աւելի կ'ապրին : Եւրոպայի և Եւրոպայի ցեղէ բնութեամբ ժիր աջողակ և աշխատասէր մարդիկ են . կանայք ալ էրիկ մարդիկներէն վար չեն մնար ուժի և քաջասրտութեան կողմանէ : Եւրոպայի մտածել չեն ախորժիր ու նախատեսութիւն չունին . կերակուրնին մեղէն և ձուկ է , խմածնին ալ պարզ ջուր և ձկան եղ . երկար ատեն անօթի կրնան կենալ , որ յիրաւի դիտելու բան է . վասն զի ցուրտ տեղերուն կենդանիներն ալ երկայն ատեն առանց ուտելու թմրած կը մնան :

Հրտարնի ծոցին քովերը եղած քաղաքները և առաւելապէս Եւրոպայի հիւսիսակողմը աւելի խեղճ վիճակի մէջ են : Եւրոպայի որ աչքը դարձնես ամայի և անբեր երկիրներ են տեսածներդ , ամպածայր ապառաժներ և ձիւնով ծածկած խորածորեր : Եւրոպայի լէն առաջ և մոտեւէն ետքը երկնքին վրայ փառաւոր լոյս մը կը տեսնուի . անկէ ետքը հիւսիսայց կ'երևնայ՝ որ լուսնին լոյսն ժամանակէն աւելի լուսաւոր է : Եւրոպայի բնակիչներն ալ Եւրոպայի լանտացիներէն քիչ տարբերութիւն ունին . միայն թէ բնութեամբ անոնցմէ ալ խեղճ ողորմելի են , վասն զի այն սառոյցները և այն անապատ դաշտերը աւելի վայրենի գազաններու , պալէնա և ըրնկա ձկներու քան թէ մարդկանց օգտակար են : Եւրոպայի կղզին ալ որ բնակչին մօտերը կ'իյնայ , գրեթէ նոյն վիճակի մէջ , մանաւանդ թէ աւելի խեղճ է՝ սոսկալի ցրտերուն և անընդ-

Հատ երկրաշարժներուն համար , որ հոն տեղի հրաբուխ լեռներուն շատու-
թեանէն առաջ կուգայ . աս պատճառաւ տեղացի բնակչաց թիւն ալ խիստ քիչ է . երկիրն ալ ցորեն և պտուղ ամենեւին չբերեր : Յամաք երկրէն հեռու ըլլա-
լուն պատճառաւ՝ վայրի կենդանիներ և կատաղի գազաններ ալ ամենեւին չեն տեսնուիր . քիչ անգամ ճերմակ արջեր սառցոյցներուն հետ քամիով մը խաւա-
տա կ'անցնին : Աղբիւրն հիւսիսային կողմէն՝ յունիսի վերջէն ինչուան օգոստոսի վերջերը՝ միշտ արեւ կը տեսնուի . բայց նոյեմբերի ետքի օրերէն ինչուան յու-
նուարի վերջերը՝ ամենեւին արեւ չերե-
նար . իսկ այն երկայն գիշերուան մթու-
թիւնը փարատողը՝ հիւսիսայգի լոյսն է որ շատ անգամ կը պատահի : Բայց խաւանտայի օդը շատ առողջարար է , բնակիչքն ալ տղակուց չարքաշ կեանք մը անցընելու վարժութիւն կ'ընեն . նորածին տղայքը միայն ութը օր կը դիեցընեն . ետքը գետնի վրայ կը պառ-
կեցընեն ու քովը ամանով մը կաթ կը դնեն . երբոր անօթեայ՝ բերանը դէպ 'ի ամանին կը տանին , և կը թողուն որ ինքն ինքիրմէն խմէ . և երբոր ինն ամսուան կ'ըլլայ , անխտիր ամէն կե-
րակուր կուտան անոր . տղան պատան-
դել՝ օրօրել ինչ ըսել է՝ չեն գիտեր խա-
լանտացիք . մէկ տարուան որ ըլլայ՝ եր-
կրին սովորական հագուստը կուտան անոր որ հագնի : խալանտացիք բնու-
թեամբ ընդհանրապէս շահասէր և ծոյլ են . անոր համար ալ շատ մեղա-
դրելի պակսութեանց տէր են , մանա-
ւանդ արբեցութեան . վասն զի ամէն ու-
նեցածնին չունեցածնին կը ծախեն օղի խմելու համար : — Ափոնիայի բնա-
կիչներն ալ՝ որ Լարոպայի հիւսիսային կողմերը կ'իյնայ , Արօնլանտացոյ շատ նման են՝ իրենց գծազրութեամբն ու բարքովը . ասոնք սովորութիւն ու-
նին որ նոր ծնած տղան մէկէն ջրի մէջ կը խոթեն : Բնդհանրապէս ամէն հիւ-
սիսային երկիրներուն բնակչաց գէմբին գծազրութիւնը մէկմէկու նման է . և ինչպէս որ հաւանական կ'երեւայ՝ ա-

սոնց ամենուն սկիզբը (Թաթարներէն եղած պիտի ըլլայ : Բնութեամբ խեղճ են ու արհեստից և մանաւանդ զինուո-
րական կրթութեան ամենեւին յարմա-
րութիւն չունին . միայն որսի և ձկնոր-
սութեան կը պարապին , և քիչ անգամ իրենց հայրենի երկրէն կը հեռանան :

(ՀԱՐՈՒՆԱՎՈՒԹԻՒՆՆ ՌԻՐԵՇ ԱՆԳԱՄ)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Տաշ շահան :

ՍԵՂՄԻԿ հարաւային հողմոյն
Հնչեաց և եղև նոր գարուն ,
Եւ սիրելի իմ քաղցրագոյն
Եւ նիստ առննթեր վարդենոյն :
Ու բերկուորիք որդոյ եղանց
Իջին յանտառախիտ լեռանց
Ըջերն յանեղէն ծարուրած .
Փառք ներակերտող բարձրելոյն :
Սիւթ յանապատէ դիմեալ գան ,
Յարօտ շուշանիւ շատանան .
Ըմէն երկուորիք Փարտ ոչ կան .
Ստեղծողն յօրինել զուգագոյն :
Սէր իմ սիրով եկ 'ի յայգին ,
Ըհա ծաղկեցաւ նունենին .
Թաչուն նստել վերայ վարդին
Չայնէ առ իւր սիրեցելոյն :
Երամ երամոց հետեւին
Թաչունք ամենայն զետեղին ,
Երգեն փառս տան ստեղծողին
Նուագս ներբողից գոյնզգոյն :
Սալամք իջին լեռներուն
Կարկնչեն մէջ թրփերուն ,
Ունկըն դիր ձագերուն ,
Ոմըն թաւ ոմըն նրբագոյն :

ՄՈՎՍԷՍ